ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

<< 18 >> օգոստոսի 2012թ. № 034/02-462

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան,

ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 30 հոդվածի 8-րդ կետի համաձայն ուղարկվում է Սպիտակի համայնքի ավագանու 2012թ. օգոստոսի 18-ի որոշումները:

Առդիր՝ << 4 >> թերթ:

Հարգանքներով՝

ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ. Վ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

<<18>> օգոստոսի 2012թ. № 43-Ա

## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12 հոդվածով, Սպիտակի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Սպիտակի համայնքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 18-ի նիստի օրակարգը.

**ՕՐԱԿԱՐԳ**

Սպիտակի համայնքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 18-ի նիստի

1. Սպիտակի համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 18-ի <<Սպիտակի համայնքի 2012 թվականի ճշտված բյուջեն հաստատելու մասին>> թիվ 2-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Խաչատուր Վարազդատի Կոստանյանի՝ երկրաշարժի հետևանքով կորցրած բնակարանի խնդրի մասին

ԿՈՂՄ (6) ԴԵՄ(0) ՁԵՌՆՊԱՀ(0)

ԿԱՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԲԱՂԻՇ ՄԱԹՈՍՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՈՅԱՆ
ԱՐԳԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՍԱՀԱԿՅԱՆ**

2012թ. օգոստոսի 18
ք. Սպիտակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com


## ՈՐՈՇՈՒՄ

<<18>> օգոստոսի 2012թ. № **44-Ն**

### ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.01.2012 ԹՎԱԿԱՆԻ <<ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՃՇՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 62-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով, 33 հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, Սպիտակի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Հաստատել Սպիտակի համայնքի ավագանու 18.01.2012թ. թիվ 2-Ն որոշմամբ հաստատված Սպիտակի համայնքի 2012թ. բյուջեում համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Բյուջեի տողերը համարել փոփոխված սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություններին համապատասխան:

| ԿՈՂՄ(6) | ԴԵՄ(0) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|
| ԿԱՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ | | |
| ԲԱՂԻՇ ՄԱԹՈՍՅԱՆ | | |
| ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՈՅԱՆ | | |
| ԱՐԳԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ | | |
| ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2012թ. օգոստոսի 18
ք. Սպիտակ

# Հավելված

Սպիտակի համայնքի ավագանու
« 18 » ___08_2012թ. թիվ_ 44 –Ն որոշման

Հազ. դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | | Ընդամենը | Պակասեցում վարչ.բյուջեից | Բնակարանային շին. և կոմ. Ծառ./ԲՍԳ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| LJ 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | | |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 0 | -2700.0 | 2700.0 |
| 2661 | 6 | 6 | 1 | *Սուբսիդիա* | *4511* | 2700.0 | | 2700.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | *ՀՀ համայնքների բյուջեի պահուստային ֆոնդ* | *4891* | -2700.0 | -2700.0 | |

Սպիտակի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

<<18>> օգոստոսի 2012թ. № 45-Ա

## ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ՝ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿՈՐՑՐԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16 հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խաչատուր Վարազդատի Կոստանյանի բնակարանային հաշվառման գործում առկա Սպիտակ քաղաքի Մուրացան փողոցի թիվ 52 շենքի թիվ 7 երեք սենյականոց բնակարանի մասին Սպիտակի ԲՇՏ-ի կողմից 2001թ. մայիսի 7-ին տրված 034-68–431 տեղեկանքը, համաձայն որի վերջինիս ընտանիքը՝ 5 անձով, 1988թ. երկրաշարժի հետևանքով կորցրել է Մուրացան փողոցի թիվ 52 շենքի թիվ 7 բնակարանը, բնակարանների հատկացման գործընթացում հիմք չի ընդունվել այն պատճառով, որ դրանում նշված տեղեկությունները համարվել են ոչ լիարժեք, քանի որ բնակարանների վարձավճարների վճարումների հաշվառման գրքում տվյալները գրված են մատիտով, հիմք ընդունելով Խ. Կոստանյանի կողմից Սպիտակի համայնքի ավագանու նիստին հրավիրված վկաների ցուցմունքները այն մասին, որ մինչ երկրաշարժը Խաչատուր Վարազդատի Կոստանյանը իր ընտանիքով (ինքը, կինը՝ Վիկտորիա Սարգսյանը և 3 երեխաները) բնակվել է Մուրացան փողոցի թիվ 52 շենքի թիվ 7 երեք սենյականոց բնակարանում, Սպիտակի համայնքի ավագանին *որոշում է.*

1. Առաջարկել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովին՝ 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և բնակարանի կարիքավոր ընտանիքների հերթացուցակում Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999թ. հունիսի 10-ի թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի համաձայն հաշվառված Խաչատուր Վարազդատի Կոստանյանի բնակարանի հատկացման գործընթացի ապահովման համար հաշվի առնել, որ Խաչատուր Կոստանյանը երկրաշարժի հետևանքով կորցրել է <<ք. Սպիտակ, Մուրացան փողոցի թիվ 52 շենքի թիվ 7>> հասցեի երեք սենյականոց բնակարանը, որը հատկացված է եղել նրա հինգ անձից կազմված ընտանիքին:

ԿՈՂՄ (6) ԴԵՄ(0) ՁԵՌՆՊԱՀ(0)

ԿԱՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԲԱՂԻՇ ՄԱԹՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՈՅԱՆ

ԱՐԳԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2012թ. օգոստոսի 18
ք. Սպիտակ